«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 72/5

16-ը մարտի 2024 թվականի

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի և շահակից կառույցների համագործակցության ապահովման կանոնակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 23-րդ կետի 5-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի և շահակից կառույցների համագործակցության ապահովման կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

2024թ. մարտի 16-ի նիստի թիվ 72/5 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

Կանոնակարգ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի և շահակից կառույցների համագործակցության ապահովման

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետև՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) և շահակից կառույցների համագործակցության ապահովման» կանոնակարգը (այսուհետև՝ Կանոնակարգ) սահմանում է Մասնաճյուղի հետ ՀՀ-ում գործող պետական, մասնավոր և միջազգային ձեռնարկությունների, ընկերությունների ու կազմակերպությունների (այսուհետ՝ Շահակից կառույցներ կամ Կառույցներ) կայուն համագործակցության համակարգ ստեղծելու, Մասնաճյուղի ուսանողների ապագա կարիերայի զարգացմանն ու նրանց մասնագիտական գործունեությանն աջակցելու ձևերն ու մեխանիզմները, Կառույցների հետ համագործակցությունը ապահովող հանձնաժողովի աշխատակարգը։

2. Կանոնակարգը մշակվել է «ՀՀ կրթության մասին օրենքի», ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրությունների, ԵՊՀ ԻՄ գործունեության ռազմավարական պլանավորման պահանջների և ակնկալիքների, Մասնաճյուղում պրակտիկայի

կազմակերպման կարգի, կրթության որակի բնագավառում ԵՊՀ ԻՄ քաղաքականության հիման վրա։

3. Շահակից կառույցների հետ Մասնաճյուղի համագործակցության **նպատակն է.** ֆակուլտետների ներուժով ընդլայնել ՀՀ պետական, մասնավոր ընկերությունների և կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակը, ապահովել բազմակողմանի համագործակցություն, ներգրավվել ՀՀ և մարզի խնդիրների լուծման ծրագրերում, նպաստել մարզի զարգացմանն ու առաջընթացին և այդ համագործակցության շրջանակներում նպաստել ուսանողների մասնագիտական կարողությունների բարելավմանը, աջակցել նրանց նախաձեռնություններին, բիզնես գաղափարներին, ծրագրերին և կարիերային։

4. Շահակից կառույցների հետ Մասնաճյուղի՝ ի դեմս ֆակուլտետների համագործակցության **խնդիրներն են.**

1) իրականացնել աշխատանքի վրա հիմնված կրթական ծրագրեր,
2) մշակել և իրականացնել տարածաշրջանային խնդիրների լուծմանը, ուսանողների ապագա կարիերայի ձևավորմանն աջակցող ծրագրեր և միջոցառումներ,
3) ապահովել և ամրապնդել կառույց-ուսանող կապը՝ ներգրավելով ուսանողներին տարբեր կարճաժամկետ մասնագիտական պրակտիկաներում (ինտերշիփ),
4) ոլորտային կառույցներում ուսանողների և շրջանավարտների համար կազմակերպել մասնագիտական վերապատրաստումներ,
5) նախաձեռնել և իրականացնել ուսանողների ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների զարգացմանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ,
6) աջակցել ուսանողների բիզնես գաղափարների իրականցմանը՝ խրախուսելով նրանց նախաձեռնողականությունը,
7) ապահովել շրջանավարտների կարողությունների համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին,
8) աշխատաշուկայում ԵՊՀ ԻՄ շրջանավարտին դարձնել ավելի մրցունակ,
9) համալրել աշխատաշուկայում առկա թափուր աշխատատեղերը որակյալ մասնագետներով։

2. ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Կառույցների հետ համագործակցության ապահովման, ամրապնդման և զարգացման քայլերն են.

1) մշակել Կառույցների հետ համագործակցության ռազմավարություն,
2) ստեղծել Գիտական խորհրդին կից Մասնաճյուղի և Կառույցների հետ համագործակցությունն ապահովող մշտական հանձնաժողով (այսուհետև՝ հանձնաժողով),
3) ստեղծել «Շրջանավարտների միություն»՝ Կառույցների հետ համագործակցության ընդլայման, աշխատանքների հասցեականության բարձրացման համար:

6. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդին կից Կառույցների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի կազմը հաստատում է ԵՊՀ ԻՄ տնօրենը՝ 2 տարի ժամկետով:

3. ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե մասնաճյուղի տնօրենն է/փոխտնօրենն է, իսկ քարտուղարը՝ Պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժնի վարիչը/ներկայացուցիչը:

8. Հանձնաժողովի անդամների թիվը սահմանվում է գիտական խորհրդի կողմից այն տրամաբանությամբ, որ հանձնաժողովի կազմում ներգրավվելու են մասնաճյուղի ֆակուլտետների ներկայացուցիչներ, մասնաճյուղի հաշվապահությունից ներկայացուցիչ և համագործակցող Կառույցների ներկայացուցիչներ, որոնք պետք է կազմեն հանձնաժողովի անդամների մինչև 1/3-ը:

9. Հանձնաժողովի կազմում ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի ներկայացուցիչներն առաջադրվում են ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից: Հանձնաժողովի կազմում ֆակուլտետներից կարող են առաջադրվել ֆակուլտետի գիտքարտուղարը, ամբիոնների վարիչները, կրթական ծրագրերի ղեկավարները,

պրակտիկաների ղեկավարները և պրոֆեսորադասախոսական կազմի այլ ներկայացուցիչներ։

10. Մասնաճյուղի Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության կողմից հանձնաժողովի կազմում առաջադրվում է մեկական ներկայացուցիչ։

11. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, հանձնաժողովի նախագահի կողմից։

12. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների 2/3-ը: Հանձնաժողովում որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:

13. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է նրա կողմից լիազորված հանձնաժողովի անդամը:

14. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի անդամների կողմից հաստատված օրակարգով: Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են:

15. Հանձնաժողովը մշակում և հաստատում է իր տարեկան գործունեության պլանը:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

12. Հանձնաժողովի նախագահը՝

16.1. հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,

16.2. համակարգում է հանձնաժողովի որոշումների ընդունման գործընթացը,

16.3. առանձին հարցերի քննարկման նպատակով հրավիրում է համապատասխան կարգավիճակ կամ որակավորում ունեցող աշխատակիցների, մասնագետների և փորձագետների,

16.4. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված նախագծերը,

16.5. իրականացնում է ԵՊՀ ԻՄ ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

17. Հանձնաժողովի քարտուղարը՝

17.1. ապահովում է տեղեկատվության փոխանակումը հանձնաժողովի անդամների միջև, վարում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները,

17.2. հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ներհամալսարանական և արտահամալսարանական շրջանակներում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված փաստաթղթերը և իրականացված աշխատանքները,

17.3. ունի հանձնաժողովի անդամին վերապահված իրավունքներն ու պարտականությունները:

18. Հանձնաժողովի անդամը՝

18.1. մասնակցում է հանձնաժողում բարձրացված հարցերի քննարկմանը,

18.2. հանձնաժողովում անցկացված քննարկումների հիման վրա քվեարկությունների միջոցով մասնակցում է որոշումների ընդունմանը,

18.3. հանձնաժողովի որոշմամբ՝ ներհամալսարանական և արտահամալսարանական շրջանակներում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված փաստաթղթերը և իրականացված աշխատանքները,

18.4. իրականացնում է ներքին իրավական ակտերով և սույն աշխատակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ:

6. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

19. Հանձնաժողովի գործառույթներն են.

19.1. ուսումնասիրել ԵՊՀ ԻՄ և ՀՀ-ում ակտիվ գործունեություն ծավալող պետական, մասնավոր և միջազգային ընկերությունների ու կազմակերպությունների համագործակցությանն առնչվող հարցեր և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի ու տնօրենության քննարկմանը ներկայացնել

նրանց հետ հնարավոր համագործակցության վերաբերյալ առաջարկներ, մշակել և իրականացնել համապատասխան ծրագրեր,

19.2. համակարգել ԵՊՀ ԻՄ ֆակուլտետների կողմից գործընկեր Կառույցների հետ տարվող աշխատանքը՝ ձևավորելով համապատասխան միասնական տեղեկատվական և մեթոդական բազա,

19.3. աջակցել ֆակուլտետներում ուսանողների կարիերայի խնդիրներին առնչվող և ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը,

19.4. Քննարկել և լուծել մասնաճյուղի և Կառույցների միջև համագործակցության ապահովման վարչական-կազմակերպչական, ֆինանսական և այլ հարցեր,

19.5. Պարզել աշխատաշուկայում, ինչպես նաև կրթական ոլորտում առաջնային համարվող խնդիրներն ու բացթողումները,

19.6. Մշակել և իրականացնել Մասնաճյուղի ուսանողների և շրջանավարտների կրթական խնդիրներին առնչվող ծրագրեր և միջոցառումներ,

19.7. Պարբերաբար կազմակերպել աշխատաժողովներ, հանդիպում-քննարկումներ, միջոցառումներ մասնաճյուղի և Կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ապահովելով նրանց փորձագիտական գիտելիքների ներկայությունը Մասնաճյուղի ուսումնական գործընթացում,

19.8. պարբերաբար կազմակերպել հանդիպումներ շրջանավարտների հետ, որոնք կներկայացնեն իրենց աշխատանքային փորձը, աշխատաշուկայում կատարվող զարգացման միտումները և ներկայացնել առավել պահանջված ոլորտները և վարկանիշային կազմակերպությունները (կարևորելով մարզայինները),

19.9. Նախաձեռնել և իրականացնել տարածաշրջանի Կառույցների հետ համագործակցային ծրագրեր, որոնք կնպաստեն սովորողների ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների զարգացմանը,

19.10. Ակտիվացնել բիզնես համագործակցությունը մարզի ինքնակառավարման մարմինների և գործարար ընդհանրության հետ՝ տարածաշրջանային խնդիրներ լուծելու համար,

19.11. Աջակցել շրջանավարտների, ուսանողների և գործատուների միջև անմիջական կապի հաստատմանը,

19.12. Ընդլայնել գործատու-կազմակերպությունների հետ համագործակցությունը ուսումնական գործընթացում նրանց ռեսուրսների օգտագործման նպատակով,

19.13. Ակտիվացնել համագործակցությունը տարածաշրջանային քոլեջների հետ՝ լրացուցիչ կրթական ծառայություններով աջակցելու համար,

19.14. իրականացնել Կառույցների հետ համագործակցության խնդիրների շուրջ տարվող աշխատանքների մշտադիտարկում և գնահատում:

20. Հանձնաժողովն իր գործառույթների շրջանակներում կարող է պարբերաբար ներկայացնել առաջարկներ մասնաճյուղի և Կառույցների միջև համագործակցության ակտիվացման և արդյունավետության բարձրացման վերաբերյալ, մասնավորապես.

20.1. ներկայացնել գործատու-կազմակերպությունների բարձրորակ մասնագետների՝ ուսումնական գործընթացում կամ լրացուցիչ մասնագիտական դասընթացներ իրականացնելու գործում ներգրավելու համար, որոնք հնարավորություն կտան ուսանողներին լրացնել, կատարելագործել և զարգացնել/արդիականացնել ձեռք բերած մասնագիտական հմտություններն ու կարողությունները,

20.2. առաջարկել ուսումնական պլաններում ներդնել աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների կողմնորոշմանն ուղղված դասաժամ (կամ լրացուցիչ դասընթաց),

20.3. ներկայացնել առաջարկներ ուսումնական և մասնագիտական պրակտիկաների ծրագրերի բարելավման և դրանց արդյունավետ կազմակերպման հնարավորությունների ընդլայնման վերաբերյալ՝ նախապայման ստեղծելով մասնագիտական աշխատաշուկայում

ուսանողների ներգրավվածությունն ավելացնելու և ուսանողների աշխատունակության հնարավորությունների զարգացման համար (հիմքում դնելով դասավանդվող այն առարկաների գործնական բաժինները, որոնք հնարավոր չէ ապահովել Մասնաճյուղում),

20.4. Ուսանողներին և շրջանավարտներին տրամադրել տեղեկատվություն թափուր աշխատատեղերի և ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող միջոցառումների մասին,

21. Ուսանողների համար ստեղծել Կառույցներում կամավորական աշխատանքներ իրականացնելու հնարավորություն, ինչը ուսանողներին հնարավորություն կտա ձեռք բերել մասնագիտական փորձ և հետագայում հաջողությամբ մտնել աշխատաշուկա:

22. Ընդլայնել և պարբերաբար թարմացնել մասնաճյուղի շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տեղեկատվական բազան:

7. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23. Հանձնաժողովն իր վրա դրված խնդիրների կատարման անհրաժեշտությունից ելնելով, իրավունք ունի.

23.1 հանձնաժողովի իրավասությանը ենթակա աշխատանքների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու Մասնաճյուղի տնօրենին ու Գիտական խորհրդին,

23.2 քննարկելու և տնօրենին ներկայացնելու համագործակցության ապահովման գործընթացների համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերի նախահաշիվը և դրա իրականացման հաշվետվությունը,

23.3 գործառութային պարտականությունների կատարման նպատակով ստեղծելու մշտական և ժամանակավոր աշխատանքային խմբեր, նրանց կազմը հաստատելու հանձնաժողովի նիստում, անհրաժեշտությունից ելնելով՝ նշված աշխատանքներին ներգրավելու այլ շահագրգիռ անձանց,

23.4 Մասնաճյուղի տնօրենին ներկայացնելու առաջարկություններ և միջնորդություններ՝ հաշվետու ժամանակաշրջանում առավել աչքի ընկած աշխատակիցներին խրախուսելու մասին,

24. Հանձնաժողովը պարտավոր է.

24.1 ժամանակին և ակտիվորեն իրականացնել սույն կանոնակարգով նախատեսված խնդիրներն ու պահանջները,

24.2 կատարել գործառութային պարտականությունները՝ համաձայն հաստատված աշխատանքային պլանի,

24.3 համագործակցել մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումների հետ և նրանց ցույց տալ գործնական և տեսական օգնություն,

24.4 ամեն տարվա վերջին Գիտական խորհրդին ներկայացնել հաշվետվություն ձեռնարկությունների հետ համագործակցության ապահովման ուղղությամբ մասնաճյուղի ձեռքբերումների վերաբերյալ:

8.ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

25. Սույն կարգը հաստատում է մասնաճյուղի գիտական խորհուրդը:

26. Կարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել.

26.1 Մասնաճյուղի տնօրենի,

26.2 Որակի կառավարման հանձնաժողովի,

26.3 ՊԿՇՀ բաժնի կողմից առաջարկություններով՝ գիտական խորհրդի որոշմամբ: